Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Մայրենի

Թեմա՝ 5-6-րդ դասարանների աշակերտներ ուսումնական գործունեությունը «Մայրենի» առարկայի դասերին

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Արթուր Միքայելյան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….....2

Գլուխ 1.ՈՒսումնական գործունեության բաղադրիչներն ու բնութագրիչները …….....4

Գլուխ 2. ՈՒսումնական գործունեության ձևավորման միջոցները 5-6-րդ դասարաններում «Մայրենի» առարկայի դասերին……..8

Գլուխ 3. ՈՒսումնական գործունեության վերահսկողությունը 5-6-րդ դասարաններում («Մայրենի») առարկա.....12

Եզրակացություն.....13

Գրականության ցանկ.....14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նպատակ՝5-6-րդ դասարանների աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների բարելավում: Խնդիրներ

1. Սահմանել և ներկայացնել 5-6-րդ դասարանների աշակերտների ուսումնական գործունեությունը:
2. Ուսումնասիրել 5-6-րդ դասարանների աշակերտների ուսումնական գործունեությունը:

Ուսումնական գործունեության ուսումնասիրումն արդիական է մեր ժամանակներում նույնպես: Այն սովորողի գործունեությունն է, որի միջոցով աշակերտը ձեռք է բերում գիտելիքներ, զարգացնում իր կարողություններն ու հմտությունները: Հանրակրթական ծրագրով նախատեսված գիտելիքները յուրացվում են ուսումնական գործունեության միջոցով: Այդ իսկ պատճառով էլ «ուսումնական գործունեություն»-ը կրթական գործընթացի հիմնական հասկացություններից է: Զարգացնող ուսուցման, ինքնակրթության հիմքերը դրվում են ուսումնական գործունեության միջոցով, որը պահանաջում է համապատասխան հոգեբանական վիճակ և պայմաններ: Պետք է հաշվի առնվեն նաև տարիքային առանձնահատկությունները: Դա անհրաժեշտ է ցանկալի արդյունքի հասնելու համար: Ուսումնական գործունեությունն ունի մի քանի գործառույթներ: Օրինակ՝ ապահովել աշակերտի տեղեկացվածությունը, գիտելիքի յուրացումը, կարողությունների և հմտությունների զարգացումը: Կարևոր գործառույթ է սովորողի ներդաշնակ զարգացման և դրսևորվելու համար պայմանների ստեղծումը, նրան շարունակական կրթության մղելը:

Ուսումնական գործունեության գործառույթներից թերևս ամենաուշագրավն այն է, որ աշակերտն ինքն իր առջև պահանջներ դնի և հասնի դրանց կատարմանը: Դա կարող է արտահայտվել առաջադրանքի ձևակերպմամբ և այդ առաջադրանքի կատարման յուրօրինակ մոտեցմամբ: Իսկ դա նշանակում է, որ սովորողն արդեն մի մեծ քայլ է կատարել իր ուսումնառության ընթացքում: Նա պետք է որոնի իրեն անհաժեշտ տեղեկությունը՝ նախևառաջ ընտրելով այդ տեղեկության որոնման միջոցն ու ձևը, այնուհետև պետք է աշխատի այդ տեղեկությամբ, այն բաժանի մասերի կամ հատվածների, վերլուծի այն՝ կատարելով համեմատություն, համադրում կամ հակադրում: Ուսումնական գործունեությունն արդեն իսկ պահանջում է տրամաբանական մոտեցում և գործուն մտավոր աշխատանք, քիչ թե շատ զարգացած ինտելեկտ և, իհարկե, սեփական դատողությունները հիմնավորելու ունակություն: Այդ

ամենին հասնելու համար աշակերտը դասերի ընթացքում սովորում է լսել, լինել հետևողական, զարգացնել իր դիտողականությունը և ինքնավերահսկման միջոցով նույնպես հասնել ցանկալի արդյունքի, այն է՝ առաջադրանքի կատարմանը, հարցի պատասխանը գտնելուն և այլն:

ՈՒսումնական գործունեության արդյունքներից է նաև ուսման նկատմամբ ներքին շարժառիթների առաջանալը: Աշակերտը տեսնում է նոր արժեքներ, կատարելագործվում է նրա արժեքային համակարգը, նոր գիտելիքների որոնման և հայտնաբերման ընթացքում դառնում է ավելի աշխատասեր, զգում է իրեն վստահ ու համարձակ:

Գլուխ1: ՈՒսումնական գործունեության բաղադրիչներն ու բնութագրիչները:

Կարողանալ սովորել նշանակում է ինքնուրույն և արդյունավետ ծավալել ուսումնական գործունեություն: ՈՒսումնական գործունեության հիմնական բաղադրիչներն են.

1. ուսումնաճանաչողական շարժառիթներ և դրդապատճառներ,
2. ուսումնականտարաբնույթառաջադրանքներ,
3. ստուգում և ինքնաստուգում,
4. գնահատում և ինքնագնահատում:

5-6-րդ դասարանների աշակերտները «Մայրենի» առարկայի դասաժամերին ստանում են որոշակի ծավալի գիտելիքներ, տիրապետում են անհրաժեշտ կարողությունների և հմտությունների: Նրանց մատուցվում է ուսումնական այնպիսի նյութ, որն անհրաժեշտ է սովորել տվյալ ժամանակահատվածում և կարևոր է ուսումնառության հաջող ընթացքն ապահովելու համար: Կարևորվում են ուսումնական գործունեության հատկապես հետևյալ բնութագրիչները.

1. այն ուղղված է ուսումնական թեման յուրացնելուն, այսինքն՝ գիտելիք ստանալուն և ուսումնական առաջադրանքները կատարելուն,
2. ուսումնաական գործունեության ընթացքում աշակերտը յուրացնում է նոր հասկացություններ, ինչպես նաև իր գործունեության ձևերը,
3. ուսումնական գործունեությունը հանգեցնում է աշակերտի հոգեբանության և ներաշխարհի փոփոխության,
4. փոխվում է աշակերտի վարքը՝ կախված ուսումնական գործունեության ընթացքում կատարած սեփական քայլերից:

ՈՒսումնասիրենք 5-6-րդ դասարանների աշակերտների ուսումնական գործունեությունը «Մայրենի» համակցված առարկայի դասաժամերին: Իմացական ուսումնական գործունեությունն արտահայտվում է իմացական նպատակի ձևակերպմամբ, ինչպես նաև տեղեկության կամ գիտելիքի որոնմամբ և առանձնացմամբ: Այսինքն՝ սովորողը հստակ հասկանում է իր ուսումնական գործունեության նպատակը տվյալ դասին, ապա ստանում է կամ ինքնուրույն որոնում է անհրաժեշտ գիտելիքը, որպեսզի կատարի եզրահանգում, ասենք, լեզվական օրենքի՝

կանոնի ձևով: Դրա համար նա պլանավորում է իր աշխատանքը կամ շարժվում է ուսուցչի տված պլանով: Հստակեցնում է նպատակը, քայլերը, դասընկերների հետ համագործակցելու ձևերը, որոշակիացնում է իր, դասընկերների գործառույթները: Ելնելով անձնական և սոցիալական արժեքներից՝ նա կարող է ղեկավարել ընկերների վարքը, եթե դա անհրաժեշտ է արդյունավետ ուսումնական գործունեություն ծավալելու համար:

ՈՒսումնական գործունեության ընթացքում մշտապես կարևորվում է աշակերտի գրագետ խոսքը: Նա իր մտքերը ճիշտ և լիարժեք արտահայտելու համար պետք է ունենա հարուստ բառապաշար, որը, սակայն, ընդամենը մեկ գործոն է: Այդ հարցում մեծ նշանակություն ունեն ինչպես ունեցած լեզվական գիտելիքները, այնպես էլ գրական ստեղծագործությունների առանձնահատկությունների յուրացումը, ընթերցանությունը և այլն

«Մայրենի»-ի դասաժամերին ուսումնական գործունեությունը անպայման ենթադրում է աշակերտի ունակությունների դրսևորում նպատակադրման, պլանավորման, ստուգման, ճշգրտման և գնահատման հարցերում: 5-6-րդ դասարանների «Մայրենի» առարկայի դասագրքերում ուսումնական նյութն ու առաջադրանքներն այնպիսին են, որ սովորողին հնարավորություն են տալիս դրսևորվելու վերոնշյալ հարցերում: Այդ ամենը կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև միջամտությամբ: 5-6-րդ դասարաններում ուսումնական գործունեության տրամաբանական կողմը ենթադրում է ուսումնական նյութի կարևոր և երկրորդական հատկանիշների անջատում, դասակարգում, վերլուծություն, պատճառահետևանքային կապերի շեշտադրում և անպայման հիմնավորում կամ ապացույց: Հատկապես այս վերջինը առավել քան հաճախակի կիրառելի է «Մայրենի» առարկայի դասագրքերում տրված արձակ երկերը (հեքիաթներ, պատմվածքներ) ուսումնասիրելիս: Որոնողական և ստեղծագործական աշխատանք պահանջող առաջադրանքերը կատարելիս աշակերտը ներգրավվում է ուսումնական գործունեության բավականին բարդ փուլի մեջ, որի ավարտին նա իրեն զգում է հաղթող, ուժեղ և իր մտավոր ուժերի վրա վստահ:

ՈՒսումնական գործունեության ձևեր ստեղծելու համար 5-6-րդ դասարանների սովորողներին հանձնարարվում է վերարտադրել կարդացածը կամ նախապես սովորածը, ներկայացնել դասին առնչվող նկարը, ստեղծագործել տրված թեմայով, գործուն մասնակցություն ունենալ դասի ամփոփման ժամանակ: Այդ ամենը ձևավորում է նրա անձնային հատկանիշները: Դասագրքերում տրված վարժությունները կատարելու համար աշակերտը պետք է յուրացրած լինի գիտելիքը: Դա ուսումնական գործունեության՝ տեսական գիտելիքի գործնական կիրառումն ապահովող միջոց է,

որով և պարզվում է թեմայի հասկացվածության աստիճանը, ինչը չափազանց կարևոր է հետագա աշխատանքը պլանավորելու համար: ՈՒսումնական գործունեության ընթացքում հաղորդակցական հմտություններ ձևավորելու և զարգացնելու համար աշակերտն անդրադառնում է դասընկերոջ կատարած աշխատանքին, երկխոսության մեջ է մտնում նրա հետ: Այս տեսակետից արդյունավետ են համագործակցային ուսուցման մեթոդները, որոնք վերջին տասը տարիների ընթացքում լայն տարածում են ստացել: Համագործակցային ուսուցումը նուրբ հակադրություն է դասավանդման ավանդական մեթոդին, իսկ երբեմն այդ երկուսը լրացնում են իրար, քանի որ նոր ժամանակները պահանջում են նոր մոտեցումներ: Տեխնիկական և տեխնոլոգիական առաջընթացի դարում գիտելիքը լայն տարածում է ստանում: Դասագիրքը դադարել է գիտելիքի միակ աղբյուր լինելուց: Ըստ որոշ տեղեկությունների՝ տասնհինգ տարում արդիականությունը կորցնում է ընդհանուր գիտելիքի 70 տոկոսը և դառնում ժամանակավրեպ մի բան: ՈՒստի՝ անձի շարունակական ինքնակրթությունը դառնում է կարևորագույն գործոն, եթե ցանկալի նպատակը զարգացած հասարակություն ունենալն է: Զարգացած հասարակության հիմքերը դրվում են դպրոցներում: Նոր դպրոցի գաղափարը արդիական է դառնում՝ կախված կրթության համաշխարհային մոտեցումներից և ժամանակի բերած նորույթներից:

Ուսումնական գործունեությունը միջին դպրոցում հիմնվում է տարրական դպրոցի ուսումնական գործունեության վրա և հիմք է դառնում ավագ դպրոցի ուսումնական գործունեության համար: Այդ երեք օղակների ընդհանրական արդյունքն է մերօրյա մարդը:

Գլուխ 2. ՈՒսումնական գործունեության ձևավորման միջոցները 5-6-րդ դասարաններում «Մայրենի» առարկայի դասերին

ՀՀ հանրակրթական չափորոշիչը հիմնված է համակարգային մոտեցման վրա: Պատրաստի գիտելիքի մատուցումից անցում է կատարվում աշակերտակենտրոն ուսուցման: Մեծանում է սովորողի ինքնուրույնության դերը, մինչդեռ չպետք է շրջանցել ուսման շարժառիթների և դրդապատճառների նկատմամբ սովորողների ցուցաբերած հետաքրքրության պակասը: Այդ թերությունը վկայում է մոտիվացիայի ցածր մակարդակի մասին և ուսուցչին ստիպում է մտածել սովորելու պահանջ առաջացնող ձևերի ու հնարների մասին: Ահա այդպես կարևորվում է ուսումնական գործունեությունը հետաքրքիր դարձնելը: ՈՒսումնական գործընթացը պետք է գրավիչ լինի սովորողի համար: Այսօրվա աշակերտը տարբերվում է տասը տարի առաջ դպրոց հաճախած աշակերտից: Այսօր նա ավելի շատ է մղվում դեպի համացանցն ու տեխնիկան և հեռացել է գեղարվեստական գրականությունից: Այդուհանդերձ ուսումնական գործընթացն անփոխարինելի է սերունդ կրթելու գործում: Աշակերտի ուսումնական գործունեությանը նորովի մոտենալու խնդիր կա:Սովորողին պետք է ուղղորդել դեպի գործուն ուսումնառություն: Այսօր աշակերտը սիրում է, որ ի՛նքը գտնի իրեն անհրաժեշտ տեղեկությունը, համագործակցի իր դասընկերոջ հետ: Անշուշտ, դա գովելի է: Ցավոք, երբեմն աշակերտը հասնում է ծայրահեղության՝ ձգտելով որոշել, թե ինչը սովորի և ինչը՝ ոչ:

«Հայոց լեզուն» ոչ միայն դասավանդվող առարկա է, այլև մյուս գրեթե բոլոր առարկաները սովորելու միջոց: Այդ տեսակետից հայոց լեզուն և նրա դասավանդումը կարևորվում է կրկնակի: ՈՒղղագրական կանոնների իմացությունն ու կիրառումը աշակերտի գրավոր խոսքի հիմքն են, և պարբերաբար կարիք է առաջանում անդրադառնալ նաև միջին դպրոցում «Մայրենի»-ի դասերին ուսումնական գործունեության նորացմանը, այն ավելի հետաքրքիր ու արդյունավետ դարձնելուն: Աշակերտին գրավում են ուսումնական գործընթացի հետաքրքրությունը, որոշակի դժվարություններ հաղթահարելը, իրեն կարևորված զգալը և իհարկե արդյունք տեսնելն ու բարձր գնահատական ստանալը: Իսկ ուսուցիչն ուղղորդում է նրան, աջակցում ու ոգևորում: Անկախ նրանից, թե որքանով է արտահայտված աշակերտի ուսման ձգտումը, նա լիովին ներգրավվում է ուսումնական գործունեության մեջ, համագործակցում է մյուսների հետ և ձևակերպում է իր կարծիքը: ՈՒսումնական գործունեության ընթացքում հետաքրքրություն և մոտիվացիա են առաջացնում այն առաջադրանքները,

որոնք աշակերտին կանգնեցնում են որոշում կայացնելու կամ ճիշտ տարբերակն ընտրելու հարցի առջև: Իսկ դրա համար նա պետք է մեկ անգամ ևս դիմի ուսուցչին, կարդա դասը, կրկնի սովորածը: Հինգերորդ կամ վեցերորդ դասարանում սովորողի համար դա աշխատանքային բնականոն գործընթաց է: Դասագրքերի վերջին էջերը հատկացված են բառարաններին, որոնցից օգտվում է աշակերտը: Ինքնին հասկանալի է, որ այդ աշխատանքի շարունակությունը կատարվելու է տարբեր բառարանների (ուղղագրական, բացատրական, արմատական) օգնությամբ: ՈՒսումնական գործունեության ձևավորման միջոցներից մեկը թելադրությունն է: ՈՒսուցողական թելադրության դասին ուսուցիչը նախ՝ կարդում է տեքստը, բացատրում է անհասկանալի բառերի իմաստները, աշակերտները գրում են դրանք բառատետրերում, ապա՝ գրատախտակին գրվում են դժվարագիր կամ ուղղագրական այս կամ այն կանոնին վերաբերող բառերը (դրանք մնում են գրատախտակին գրված), հետո՝ ներկայացվում է տեքստում տեղ գտած մի քանի բառերի բառակազմական պատկերը: Աշակերտը գործուն մասնակցություն է ունենում այս նախապատրաստական աշխատանքին: Թելադրության ընթացքում յուրաքանչյուր նախադասություն ստուգվում է աշակերտի կողմից, իսկ թելադրության ավարտին նա ստուգում է ամբողջ բնագիրը: Թեմատիկ թելադրության դասաժամին նման բացատրական աշխատանք չի կատարվում. աշակերտն ստուգում է ճիշտ գրելու իր ունակություններն ու հմտությունները: Ե՛վ ուսուցողական, և՛ թեմատիկ թելադրությունների դասաժամերին հաջորդում է սխալների վերլուծության դասը: Աշակերտը վերանայում է իր գրավոր աշխատանքը, ուղղում է իր սխալները՝ հիմնվելով ուսուցչի ուղղումների ու բացատրությունների կամ դասագրքային նյութի վրա: ՈՒսումնական գործունեության ձևավորման այս միջոցները բավականին արդյունավետ են և սովորողից պահանջում են կենտրոնացում, ուժերի լարում, վարժ գրելու կարողություն, գիտելիքի իմացություն և այլն: ՈՒսումնական գործունեության ձևավորման մեկ այլ միջոց է ուսուցողական փոխադրությունը: Աշակերտը երկու անգամ լսում է բնագիրը, ծանոթանում է նոր, դժվարագիր բառերին: Նա պետք է կարողանա կազմել պլան, հիշել բնագիրը որքան կարող է լավ, հետևել ժամանակին, մեկ անգամ պատմել տեքստն ընկերների կամ ուսուցչի օգնությամբ: Այսպիսի նախապատրաստական աշխատանքից հետո միայն նա գրում է փոխադրությունը: Թեմատիկ փոխադրություն գրելու համար աշակերտը պետք է ունենա լավ հիշողություն, գրավոր խոսքի հմտություններ, վերապատմելու շնորհ: ՈՒսումնական գործընթացի ողջ ընթացքում աչքի ընկած աշակերտներն են կարողանում լավ գրել թելադրություն կամ փոխադրություն: Իսկ ուսումնական գործունեության ստեղծագործական կողմն ապահովվում է նաև ուսուցողական և

թեմատիկ շարադրությունների, համառոտ շարադրանք կազմելու միջոցով: ՈՒսումնական գործունեության ձևավորման հնար է սովորողին որոնողական, հետազոտական աշխատանքի մղելը: Աշակերտը ուսուցչի հանձնարարությամբ հետաքրքրվում է, օրինակ, բանահյուսական նմուշներով: Դրանք լսելով ավագներից՝ գրի է առնում, ներկայացնում է դասին և այլն: Դասն առավել տպավորիչ ու հասկանալի է դառնում, երբ ուսումնասիրվող թեման հնարավորինս տեսանելի է, շոշափելի, հուզական և հետաքրքրաշարժ: Դիտողական պարագաները, ՏՀՏ-ն շարժում են աշակերտի հետաքրքրասիրությունը, գրավում նրա ուշադրությունը և ոգևորում: Աշակերտն ինքն է ստեղծում գիտելիքների իր պաշարը: Սա կառուցողականության (կոնստրուկտիվիզմի) առաջնային պայմանն է: ՈՒսումնական գործունեության ձևավորման կառուցողական հնարը 5-6-րդ դասարաններում (և ընդհանրապես) ուղղված է սովորողի ինտելեկտին: Սա անմիջականորեն կապվում է իմացական (կոգնիտիվ) զարգացման հետ: ՈՒսումնական գործունեության ձևավորման հնար է մտավոր ակտիվության պահպանումը դժվար առաջադրանքների միջոցով: Դա պետք է անել՝ հաշվի առնելով աշակերտի պատրաստականությունը: Նպաստող միջավայր ստեղծելու մասին պետք է մտածի նաև աշակերտը, որովհետև համագործակցային մեթոդներով ուսուցումն աշակերտակենտրոն է և պահանջում է աշակերտի ներգրավվածություն նաև այդ հարցում:

Գլուխ 3: ՈՒսումնական գործունեության վերահսկողությունը 5-6-րդ դասարաններում («Մայրենի» առարկա)

Վերահսկողություն իրականացնելու համար ուսումնական տարվա ընթացքում պետք է հետևողականորեն կատարել դիտարկումներ՝ նպատակ ունենալով պարզել հանրակրթությանը ներկայացվող պահանջների իրականացումն ու դասավանդման որակը, աշակերտների ակտիվությունն ու առարկայական գիտելիքի յուրացումը: Վերահսկողության ընթացում դիտարկվում են ուսումնական գործընթացի արդյունավետությանը, դասավանդման մեթոդներին, ուսումնական գործունեության ձևավորմանը, հետադարձ կապին, ինչպես նաև աշակերտի գնահատմանը վերաբերող հարցեր: Կարևորվում են նաև այն հարցերը, թե աշակերտը որքանո՛վ է կարողանում յուրացնել «Մայրենի» առարկայի դասերին մատուցվող գիտելիքը, համագործակցելու ի՛նչ հմտություններ է ձեռք բերել, որքանո՛վ է պատրաստ ինքնուրույն աշխատանքին, ինչքանո՛վ է կարողանում օգտվել ՏՀՏ-ից և այլն: ՈՒսումնական տարվա ընթացքում տրվող թեմատիկ աշխատանքների միջոցով պարզվում է աշակերտի գիտելիքի մակարդակը, իսկ գործնական աշխատանքների միջոցով՝ նաև տեղեկությունը որոնելու և կիրառելու, միջարկայական կապեր տեսնելու հմտությունը: ՈՒսումնական գործունեությունը դիտարկելու և վերահսկելու համար ուսումնասիրվում են նաև աշակերտի աշխատանքային տետրերը և բառատետրերը: Վերահսկողության հիմնական նպատակներն են.

1.ճիշտ պատկերացում կազմել ուսումնական գործունեության ընթացքի և աշակերտների գիտելիքների մակարդակի մասին,

2.ուղղել նկատված սխալները կամ թերությունները,

3.կատարելագործել նաև դիտարկան և վերահսկողության գործընթացը,

4.անդրադառնալ դասավանդման մեթոդների արդյունավետությանը,

5. անդրադառնալ աշակերտի արդարացի գնահատմանը և այլն:

Կարող են տրվել թեստեր, անցկացվել զրույցներ և քննարկումներ: 5-6-րդ դասարանցին ուսումնական տարվա վերջում պետք է կարողանա ինքնուրուն օգտվել գիտելիքի աղբյուրներից, մշակի գիտելիքը, վերաձևակերպի իմացածը, տիրապետի գիտակցական ընթերցանությանը: Դա կարող է վկայել արդյունավետ ուսումնական գործունեության մասին:

Վերահսկողությունը պետք է հնարավորություն տա պարզել, թե միջին դպրոցի աշակերտը ինքնազարգացման և մոտակա նպատակներ դնելու մասին ինչպիսի

պատկերացումներ: Արդյոք նա ունի՞ համապատասխան կարողություններ և գիտակցու՞մ է ինքնակրթության կարևորությունը: ՈՒսումնական գործունեության դիտարկումների ընթացքում ոշադրություն է դարձրվում ճշգրտող հարցերի բովանդակությանը: Ամենևին երկրորդական չէ փոխադարձ ուսուցմանը վերաբերող դիտարկումը: Պետք է պարզել աշակերտի՝ հարցեր տալու, պատասխանն ընկալելու, ընկերների հետ համագործակցելու, իրար արդարացիորեն գնահատելու, խոսակցին ճիշտ հասկանալու, սեփական կարծիքը ներկայացնելու և այն պաշտպանելու, տարբեր տեսակետների դեպքում ընդհանուր եզրակացության գալու կարողությունները: Կձևավորվի պատկերացում աշակերտի՝ իմացական նպատակները ձևակերպելու կարողությունը: Ընդհանուր պատկերացում է կազմվում ընկերների առաջ ելույթ ունենալու, գրավոր և բանավոր խոսքի միջոցով ուրիշների հետ հաղորդակցվելու կարողությունը: Դիտարկումների ընթացքում պետք է պարզվի գործնական գրություններ (դիմում, հրավիրատոմս,գովազդ) գրելու հմտությունը: Աղյուսակներ, գծապատկերներ կազմելու նրա հմտությունները պետք է ստուգվեն հատկապես լեզվական թեմաների վրա աշխատելիս, որովհետև դրա համար լեզուն ավելի շատ հնարավորեւթյուններ է տալիս, քան գրականությունը: Ստուգվում են պլան կազմելու, չափածո խոսքն արձակի վերածելու հմտությունները, գեղարվեստական խոսքը գիտականից տարբերելու բառապաշարի շերտերն իրարից տարբերելուկարողությունները: ՈՒսումնական գործունեության դիտարկում և վերահսկողություն կատարելուց առաջ պետք է կազմել գնահատման սանդղակ կամ ունենալ գնահատման որոշակի չափանիշներ: Հիմնականում կիրառելի են ուսումնական գործունեության գնահատման երեք սանդղակներ՝ ցածր, միջին և բարձր

Եզրակացություն

ՈՒսումնական գործունեությունը բավականին լայն հասկացություն է: 5-6-րդ դասարաններում աշակերտի ուսումնական գործունեության լավ կազմակերպման համար անհրաժեշտ է աշակերտների, ուսուցչի և դիտարկումներ ու վերահսկողություն իրականացնողի համատեղ աշխատանք՝ գոհացուցիչ արդյունքների հասնելու համար: Պակաս կարևոր չեն դասագրքերը, մեթոդական ուղեցույցներն ու թելադրությունների, փոխադրությունների ձեռնարկները: Միջին դպրոցի առաջին և երկրոդ դասարաններում հիմք է դրվում վերլուծական, քննադատական կարողությունների ձևավորմանը: Մտածող, վերլուծող, լեզվական օրենքների ընդհանրություններն ու տարբերությունները տեսնող, գիտելիքի ձգտող սովորողն ուսումնական գործունեության յուրօրինակ արդյունք է: Որքան էլ պահպանողական լինի կրթական համակարգը, ուսումնական գործունեությունը փոխվելու միտումներ պետք է ունենա, լինի ժամանակին համապատասխան և բավարարի աշակերտի իմացական պահանջները: ՏՀՏ-ն, եվրոպական կրթական համակարգը, նորարարական մոտեցումները դրական արձագանքի են արժանացել և նորացնում են ուսումնական գործընթացը, այն դարձնում աշակերտակենտրոն: Ուսումնական գործունեությունն ուշադրություն է պահանջում նաև ծնողներից. 5-6-րդ դասարանների աշակերտը տանը ծնողական վերահսկողության կարիք ունի, որովհետև ուսումնական գործունեությունը շարունակվում է նաև կրթօջախներից դուրս և աշակերտից պահանջում է ճիգ ու ջանք պահանջող հետևողական աշխատանք:

Գրականության ցանկ

1. Ա. Բայյան. «Մանկավարժական հոգեբանության հարցեր», Երևան, 1983:
2. «Մանկավարժություն» ամսագիր, հ. 4, Երևան, 2011
3. «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», հ.7, Երևան, 2011
4. «Հանրակրթություն», հ. 12-13, Երևան, 2014:
5. Յու. Ամիրջանյան. «Ժամանակակից դիդակտիկա», Երևան, 1990:
6. «Մասնագիտական զարգացման ձեռնարկ» ուսուցիչների համար, Երևան, 2004:
7. «Մանկավարժություն» Յու. Բաբանսկու խմբագրությամբ, Երևան, 1986: